

նութիւններուն, դարձեալ այդ թուրքէն, բայց... Կովկասի մէջ, ուր ցեղը կը պարզէր պատկերը անկանգնելի թշուառութեան, աղտին ու ախտերու մէջ խորասոյգ, կործանած ու անխելք: Մաթիկ Մելիքխանեանցը պիտի յիշէր Մոսկուայի թուրք ուսանողները, պոռնիկներու սպասարկու, հասարակ թշուառականներ, որոնց իմացականութիւնը կը մնար հաւասար ֆիզիքական անկարութեան: Այդ էր թերեւս պատճառը, որ ինքն իր վրայ ըլլար ստիպուած բռնութիւն գործելու՝ մեծցնելու համար այդ թշնամին ու գտնէր եզր մը, ուր հաշտուէին մեր ժողովուրդի զոյգ մեծ հատուածներուն իրարմէ բոլորովին հեռացած, տարադէմ զգայնութիւնները, ապրումները: Բառարանի բառ մը ու անոր տակը խտացած ապրումները որքան իրարու հետ իրենց աղերսը կ'ընեն քմահաճ, ծանօթ է բոլոր գաղափարները տարանջատող մտածողներուն: Մեր յեղափոխութիւնը -այսինքն՝ անոր պատմութիւնը մինչեւ այսօր չէ գտած հասարակաց գետին մը, ուր մարդկօրէն ըլլային հասկնալի արեւմտահայ հերոս մարտիկներուն խելացնոր արարքները ու արեւելահայ գործիչ ինտելիգենտներու անկանգնելի յիմարաբանութիւնները: Ի՛նչ միամիտ են այդ յեղափոխութեան տեսաբանները, երբ իրենց կապուած զանգուածներու սիրտին կարծեցին դրած ըլլալ ազնուագոյն սերմերը: 1915ին ստորութեան ու մատնութեան մէջ ահաւոր հանդիսացող մեր զանգուածները, երբ աղէտին պատասխանատուութիւնը կը նետէին այդ Արեւելքէն բուսած մարդոց ուսերուն, կ'ըսէին իրենց խորագոյն ճշմարտութիւնները: Արեւմտահայ, կուսակցականը, գէթ մինչեւ մեր վերջին պարտութիւնը մտաւ այդ գործունէութեան մէջ մէկ ու միակ զգացումով մը - հարկ չկայ այդ զգացումին անունն իսկ տալու: Թուրքը ատելը ապրումներուն ամէնէն իրաւը, ինչպէս կսկծագինն էր այդ օրերուն: Ու պէտք է արդար ըլլալ, ըսելու համար, որ թուրքերը ամէն բան ըրին այդ ատելութիւնը հրահրելու, ազգային զգացման վերածելու մեր, ինչպէս իրենց մէջ, նենգ ու